ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Պետական Հատվածի Արդիականացման Երկրորդ Ծրագիր
Վարկ No. 7854-AM

Առաջադրանքի անվանումը՝ **ՔԿԱԳ գործակալության տվյալների հիման վրա կենսական (Vital) ցուցանիշների վիճակագրական շտեմարանի մշակման**

Հղում No. (համաձայն Գնումների Պլանի): PSMP 2 -C -3.2.2.1

Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է ստացել Համաշխարհային բանկից «**Պետական հատվածի արդիականացման» երկրորդ ծրագրի** ֆինանսավորման համար, նպատակ ունի օգտագործել այս միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների համար:

Սույն Առաջադրանքի նպատակն է ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության ծնունդների, մահերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին կազմվող ակտերում բովանդակվող էլեկտրոնային ձևաչափով առկա տվյալների հիման վրա Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ)-ի վիճակագրական ծառայության պահանջներին համապատասխան էլեկտրոնային վիճակագրության պատրաստման համար տվյալների հավաքագրումը ՔԿԱԳ ակտային գրանցումների ընթացքում եւ մեքենայական մշակման ձևաչափով փոխանցումը Ազգային Վիճակագրական Ծառայությանը (ԱՎԾ), որը կնպաստի

1. **քաղաքացիներին** – ում հասանելի կդառնան ազգագրական, ծնելիության, մահացության և ՔԿԱԳ այլ վիճակագրական տվյալները՝ ծանոթացման, հետազոտությունների ու գիտական մշակման նպատակներով,
2. **կառավարությանը –** որն առցանց կայքում, կկարողանա հրապարակել պահանջվող վիճակագրությունը՝ պարբերաբար և այլ երկրների հետ համադրելի ձևաչափով և մեթոդաբանությամբ,
3. **միջազգային վիճակագրական կազմակերպություններին –** որոնց համար ՀՀ վիճակագրությունը հասանելի կդառնա մեքենայական մշակման ենթակա և այլ երկրների հետ համադրելի ձևաչափով:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածը կազմում է մոտավորապես 4 ամիս:

ՀՀ կառավարության աշխատակազմը և Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնը (ԱՖԾԿԿ) հրավիրում են խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Ավելի կոնկրետ, Հետաքրքրվածության հայտը պետք է ներկայացնի հետեւյալ տեղեկատվությունը.

Հիմնական բիզնեսի եւ գործունեության տարիների մանրամասն նկարագիրը՝ ներառյալ մատուցված ծառայությունները, ավարտված ծրագրերը, հասցեները, կոնտակտային տվյալները և ընկերության հիմնական աշխատակազմի կենսագրությունները և այլն:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Ծրագրային ապահովման մշակման առնվազն 3 տարվա մասնագիտացում,
- Առցանց էլ-կառավարման համակարգերի մշակման առնվազն 3 տարվա փորձ, հատկապես պետական միասնական գրանցամատյանների ստեղծման ոլորտում,
- Հայաստանում կամ ԱՊՀ երկրներում էլ. կառավարման համակարգի մշակման առնվազն մեկ հաջող փորձ:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման Ուղեցույցների» (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին, 2010 թ-ի մայիսի 1-ին) («Խորհրդատուի ուղեցույց») 1.9 պարագրաֆին, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի «Ուղեցույցներ. ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձում» փաստաթղթում (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով հետևյալ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչ 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է գրավոր ձևով ներկայացվեն ներքոնշյալ հասցեով (անձամբ, փոստով, ֆաքսով կամ էլ-հասցեով) մինչև 2016թ. հուլիսի 15-ը, ժ. 18:00 (տեղական ժամանակով):

պրն. Էդգար Ավետյան, Գործադիր տնօրեն
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
ՀՀ, ք.Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
հեռ. **(374-11) 91 05 81;**
ֆաքս **(374-10) 52 87 42**
էլ. փոստ info@ffpmc.am